https://doi.org/10.46991/S&L/2022.94.069

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Եվա Սաղոյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության գերատեսչական իրավական ակտերի փորձաքննության բաժնի պետ

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքն[1] ամրագրում է՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային արդյունքը տրամադրվում է սպառողի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր պայմանագրի կնքմամբ (հոդված 16, մաս 1):

Ճանապարհորդություն կազմակերպելու կապակցությամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և սպառողի միջև առաջացող պայմանագրային հարաբերությունների կանոնակարգման իրավական հիմք հանդիսացող այս նորմի բովանդակությունից ակներև է, որ ըստ Օրենքի՝ այդ իրավահարաբերության օբյեկտը զբոսաշրջային արդյունքն է, այսինքն՝ զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիրը (հոդված 2):

Միևնույն ժամանակ Օրենքի հիմնական հասկացությունները սահմանող 2-րդ հոդվածը որպես ինքնուրույն օբյեկտներ առանձնացնում է զբոսաշրջային միջոցառումը և զբոսաշրջային փաթեթը՝ դրանցից առաջինը բնորոշելով մեկ ծրագրում համակցված առնվազն երկու զբոսաշրջային ծառայությունից բաղկացած, միասնական սակագնով տրամադրվող և առնվազն 24 ժամից ոչ պակաս ժամանակահատվածում մատուցվող կամ առնվազն մեկ գիշերակաց ընդգրկող զբոսաշրջային արդյունք, իսկ երկրորդը՝ զբոսաշրջային ծառայությունների համալիր, որն ընդգրկում է ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ՝ կապված տրանսպորտային (և դրա հետ առնչվող), հյուրանոցային (և դրա հետ առնչվող) ծառայությունների հետ, ինչպես նաև այն ծառայությունների հետ, որոնք կապված չեն տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների հետ և զբոսաշրջային արդյունքի էական մասն են կազմում:

Վերոշարադրյալ հասկացությունների վերլուծությամբ դժվար չէ նկատել, որ թե՛ զբոսաշրջային արդյունքը, թե՛ զբոսաշրջային փաթեթը, թե՛ զբոսաշրջային միջոցառումը զբոսաշրջային ծառայությունների որոշակի համալիրներ են:

Օրենսդիրը, սակայն, Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում նշելով զբոսաշրջային արդյունքի տրամադրման պայմանագրի մասին, նույն հոդվածի մյուս մասերում, ինչպես նաև այլ հոդվածներում կողմերի պայմանագրային հարաբերությունների կանոնակարգման համար էական նշանակություն ունեցող մի շարք կարգավորումներ, ինչպիսիք են օրինակ՝ սպառողին տրամադրվող նախապայմանագրային տեղեկատվությանը (հոդված 16, մասեր 2-րդ և 3-րդ), պայմանագրի գնին (հոդված 16, մաս 4, կետ 5) վերաբերող կարգավորումները, նախատեսում է ոչ թե զբոսաշրջային արդյունքի, այլ զբոսաշրջային փաթեթի տրամադրման պայմանագրի վերաբերյալ:

Ավելին, Օրենքը, սահմանելով զբոսաշրջային օպերատորի և գործակալի գործունեության բովանդակությունը, զբոսաշրջային օպերատորի դեպքում այն բնորոշում է զբոսաշրջային արդյունքի ձևավորման, խթանման և իրացման, զբոսաշրջա-

[1] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-11-Ն օրենք, ՀՀՏՊ 2004.01.29/6 (305); այսուհետ նաև՝ Օրենք:

յին գործակալի դեպքում՝ զբոսաշրջային արդյունքի խթանման և իրացման գործունեություն, ինչի արդյունքում տրամադրվում է **զբոսաշրջային փաթեթ** (հոդված 2):

Փաստորեն, զուգահեռաբար ամրագրելով «զբոսաշրջային արդյունք», «զբոսաշրջային փաթեթ» և «զբոսաշրջային միջոցառում» հասկացությունները, օրենսդիրը կողմերի պայմանագրային հարաբերությունների կանոնակարգմանն ուղղված տարբեր նորմերում կարգավորումներ է նախատեսել մի դեպքում զբոսաշրջային արդյունքի, մյուս դեպքում՝ զբոսաշրջային փաթեթի վերաբերյալ, իսկ «զբոսաշրջային միջոցառում» հասկացությունը սահմանելուց բացի՝ դրա վերաբերյալ որևէ բովանդակային կարգավորում[1] Օրենքում այլևս չենք հանդիպում՝ բացառությամբ նրա, որ որպես զբոսաշրջային միոջոցառման առանձին տեսակ՝ Օրենքը սահմանում է նաև «տուր» հասկացությունը:

Այս ամենը թույլ չի տալիս հասկանալ, թե քննարկվող օբյեկտներից որն է ի վերջո Օրենքի իմաստով կողմերի պայմանագրային հարաբերությունների օբյեկտ, ուստի Օրենքի այս հակասական կարգավորումների համատեքստում քաղաքացիական իրավունքների նշված օբյեկտների էության և հարաբերակցության հարցն արժանի է հատուկ ուսումնասիրության:

Օրենքը, ինչպես նշվեց, զբոսաշրջային արդյունքը բնորոշում է որպես զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր: Նկատի ունենալով «ամբողջական» բառի բառարանային իմաստը[2]՝ հարց է ծագում՝ ինչ է պետք հասկանալ զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր ասելով. արդյո՞ք սա ենթադրում է զբոսաշրջային արդյունքի կազմում Օրենքում թվարկված **բոլոր զբոսաշրջային ծառայությունների** առկայության պահանջ, թե՞ խոսքն այս դեպքում կոնկրետ ճանապարհորդության համար անհրաժեշտ զբոսաշրջային ծառայությունների՝ ավարտուն կազմ ունեցող ցանկացած համալիրի մասին է:

Առաջին եզրահանգումը, մեր կարծիքով, քննադատության չի դիմանում, քանի որ գործնականում քիչ է հավանական այնպիսի իրավիճակ, երբ սպառողը զբոսաշրջային գործունեության սուբյեկտին դիմի Օրենքում թվարկված բոլոր զբոսաշրջային ծառայությունների մատուցման նպատակով: Բացի այդ, Օրենքով նախատեսված զբոսաշրջային ծառայությունների ցանկը սպառիչ չէ, հետևաբար, կարծում ենք՝ «ամբողջական համալիր» ոչ միանշանակ ընկալվող եզրույթի ամրագրմամբ օրենսդրի կամքը, այնուամենայնիվ, ուղղված չի եղել Օրենքում թվարկված բոլոր զբոսաշրջային ծառայությունների համալիրը զբոսաշրջային արդյունք որակելուն:

Երկրորդ եզրահանգումը նույնպես առաջացնում է որոշակի հարցեր, մասնավորապես՝ եթե օրենսդիրը «ամբողջական համալիր» եզրույթի ներքո նկատի է ունեցել զբոսաշրջային ծառայությունների ցանկացած համակցություն, ինչու՞ են Օրենքի մի շարք էական կարգավորումներ նախատեսվում միայն զբոսաշրջային փաթեթի առնչությամբ՝ որևէ կարգավորում չնախատեսելով զբոսաշրջային ծառայությունների՝ Օրենքով նախատեսված մեկ այլ համալիրի՝ զբոսաշրջային միջոցառման վերաբերյալ:

Այս առնչությամբ ուշագրավ դատողություններ է արել ՀՀ վճռաբեկ դատարանը՝ թիվ ԵԿԴ/5402/02/14 քաղաքացիական գործի[3] շրջանակներում անուղղակիո-

---

[1] «Զբոսաշրջային միջոցառում» եզրույթն օգտագործվում է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետում և 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում, սակայն ոչ Օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հասկացության իմաստով:

[2] Ըստ **Է. Աղայանի** «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ «ամբողջական» բառն ունի հետևյալ իմաստները՝ 1. ամբողջի՝ ամբողջության հատկություն ունեցող, 2. ավարտուն, պակասություններից զերծ ու միասնական, 3. լրիվ, չմասնատված, մասերի չբաժանված:

[3] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ **ԵԿԴ/5402/02/14** քաղաքացիական գործով 2017 թվականի հուլիսի 20-ի որոշումը:

րեն անդրադառնալով քաղաքացիական իրավունքների՝ քննարկվող օբյեկտների հարաբերակցության հարցին: Այսպես, Վճռաբեկ դատարանը, Օրենքի 2-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ գործարքի ձևին վերաբերող կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում արձանագրել է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և սպառողի միջև պայմանագիր կնքելը պարտադիր է այն դեպքում, **երբ տրամադրվում է զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր, այսինքն՝ զբոսաշրջային արդյունք:** Նույն որոշման շրջանակներում վերլուծելով քննարկվող գործով կողմերի իրավահարաբերությունները՝ Վճռաբեկ դատարանը նշել է՝ «…օրենսդիրը **զբոսաշրջային փաթեթ կազմելու դեպքում նախատեսել է գրավոր ձևով պայմանագիր կնքելու պարտականություն, որը պետք է կնքվի գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին համապատասխան**…»:

Ընդհանրացնելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտի կողմից սպառողին միաժամանակ՝ մեկ գործարքից բխող իրավահարաբերությունների շրջանակներում, **առնվազն երկու գործառույթ ընդգրկող զբոսաշրջային ծառայություններ են մատուցվում**, որոնց տևողությունը գերազանցում է 24 ժամը կամ ներառում է առնվազն մեկ գիշերակաց, ապա **զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է սպառողի հետ կնքել գրավոր պայմանագիր** և մինչև պայմանագիր կնքելը նրան տրամադրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ժամանման կամ տարանցիկ երկրների անձնագրային, մուտքի և ելքի պահանջների վերաբերյալ տեղեկատվություն[1]:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանը զբոսաշրջային արդյունքի իրացման դեպքում գրավոր պայմանագիր կնքելու օրենսդրական պահանջը հավասարապես կիրառելի է համարել նաև առնվազն երկու գործառույթ ընդգրկող զբոսաշրջային ծառայությունների համալիրի, տվյալ դեպքում՝ զբոսաշրջային փաթեթի նկատմամբ: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը, զբոսաշրջային փաթեթը, զբոսաշրջային միջոցառումը և զբոսաշրջային արդյունքը դիտարկել է որպես հավասարարժեք օբյեկտներ:

Օրենքի հիշատակված կարգավորումները ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման, ինչպես նաև իրավական հերմենևտիկայում կիրառվող **a fortiori**[2] սկզբունքի լույսի ներքո մեկնաբանելու դեպքում կարելի է արձանագրել, որ զբոսաշրջային արդյունքի՝ որպես զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիրի համար ամրագրված՝ գրավոր պայմանագիր կնքելու պահանջը վերաբերելի է նաև զբոսաշրջային ծառայությունների առանձին համալիրներին՝ զբոսաշրջային միջոցառմանը և զբոսաշրջային փաթեթին, քանի որ քաղաքացիական իրավունքների նշված երեք օբյեկտներն էլ զբոսաշրջային ծառայությունների համալիրներ են, այսինքն՝ պատկանում են միևնույն դասին, ինչը a fortiori սկզբունքի թույլատրելիության կարևորագույն նախապայման է:

Սակայն, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը[3] որպես իրավական նորմի մեկնաբանման առաջնահերթ կանոն ամրագրում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելը, ուս-

---

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի նույն որոշումը:

[2] **A fortriori** (argumenta a majori ad minus, minori ad maius) սկզբունքի դրսևորումներն են հետևյալ կանոնները՝ 1) ով լիազորված կամ պարտավորված է շատի համար, նա լիազորված կամ պարտավորված է նաև քչի համար; 2) ում թույլատրված է շատը, նրան թույլատրված է և քիչը; 3) ինչ պահանջվում է քչի համար, նույնն անհրաժեշտ է շատի համար: Այս մասին Տե՛ս **Васьковский Е. В.,** Руководство к толкованию и применению законов, М., Юридическое бюро “Городец”, 1997, էջ 119:

[3] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենք, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381):

տի գործնականում տարընկալումների տեղիք տվող և հակասական կարգավորումները զբոսաշրջության զարգացման արդի պահանջներն արտացոլող միջազգային փորձի հաշվառմամբ վերանայելը, մեր կարծիքով, օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Հարկ է նշել, որ արտասահմանյան երկրներում[1] զբոսաշրջային արդյունքը և զբոսաշրջային փաթեթը սովորաբար դիտարկվում են որպես այլընտրանքային կատեգորիաներ, իսկ այն երկրներում, որոնց օրենսդրությամբ թեև ամրագրված են նշված երկու հասկացություններն էլ, «զբոսաշրջային արդյունք» եզրույթն օգտագործվում է ոչ թե կողմերի պայմանագրային հարաբերությունների օբյեկտի, այլ դրանից տարբերվող այլ իմաստներով[2]: Ընդ որում, միջազգային պրակտիկայում, անկախ կիրառվող եզրութաբանությունից, զբոսաշրջային օրենսդրությամբ իրավական պաշտպանության օբյեկտ է ճանաչվում առնվազն երկու զբոսաշրջային ծառայություն ընդգրկող համալիրը: ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է այդպիսի համալիրի երկու տեսակ՝ զբոսաշրջային փաթեթ և զբոսաշրջային միջոցառում, ուստի հարկ ենք համարում առավել հանգամանալից անդրադառնալ վերջիններիս:

Այսպես, զբոսաշրջային փաթեթն ըստ Օրենքի՝ զբոսաշրջային ծառայությունների այն համալիրն է, որն ընդգրկում է ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ՝ կապված տրանսպորտային (և դրա հետ առնչվող), հյուրանոցային (և դրա հետ առնչվող) ծառայություններ, ինչպես նաև այլ ծառայություններ, որոնք կապված չեն տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների հետ և զբոսաշրջային արդյունքի էական մասն են կազմում: Զբոսաշրջային փաթեթով մատուցված ծառայության տևողությունը պետք է գերազանցի 24 ժամը կամ ներառի առնվազն մեկ գիշերակաց:

Զբոսաշրջային փաթեթի նշված բնորոշումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածով ամրագրված կանոնների[3] լույսի ներքո մեկնաբանելու դեպքում ստացվում է, որ զբոսաշրջային ծառայությունների համալիրը զբոսաշրջային փաթեթ որակելու համար դրա կազմում պետք է ընդգրկված լինեն ինչպես տրանսպորտային, այնպես էլ հյուրանոցային ծառայությունները, որոնք կարող են համակցվել նաև զբոսաշրջային արդյունքի էական մաս կազմող այլ զբոսաշրջային ծառայությունների հետ:

Այս կապակցությամբ արդիական է դառնում այն հարցը, թե կարելի է արդյոք խոսել զբոսաշրջային փաթեթում պարտադիր ընդգրկվող զբոսաշրջային ծառայությունների մասին, առանց որոնց հնարավոր չէ կազմակերպել ճանապարհորդությու-

---

[1] «Զբոսաշրջային փաթեթի և առնչվող զբոսաշրջային ծառայությունների մասին» Եվրոպական Միության 2015 թվականի նոյեմբերի 11-ի 2015/2302 դիրեկտիվի ընդունումից հետո դրան են միացել Եվրոպական Միության անդամ շուրջ երեք տասնյակ պետություններ՝ ներպետական օրենսդրական կարգավորումներն աստիճանաբար համապատասխանեցնելով դիրեկտիվին, ուստի այդ երկրների զբոսաշրջային օրենսդրություններով նախատեսված են գրեթե նույնական կարգավորումներ:https://ec.europa.eu/info/law/law-topic/consumers/travel-and-timeshare-law/national-transposition-measures-package-travel-directive_en

[2] Օրինակ՝ «Զբոսաշրջության և հյուրընկալության մասին» Մոնտենեգրոյի օրենքի 4-րդ հոդվածը զբոսաշրջային արդյունքը բնորոշում է որպես ինքնուրույն տարրերի հավաքածու, որոնք մշակվում են որպես նյութական ապրանքների և ծառայությունների, բնական արժեքների կամ մշակութային ռեսուրսների, զբոսաշրջային զվարճանքների, զբոսաշրջային ենթակառուցվածքների արժեքավոր շղթա:

[3] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:

նը, թե՝ ոչ, և եթե՝ այո, ապա որոնք են այդ ծառայությունները:

Հարկ է նշել, որ զբոսաշրջային փաթեթ կազմող զբոսաշրջային ծառայությունների շրջանակի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Որոշ հեղինակների կարծիքով՝ զբոսաշրջային արդյունքն (փաթեթը[1]) ընդհանուր գնով մատուցվող փոխադրման և տեղաբաշխման ծառայությունների համալիր բնորոշելն արդարացված է, քանի որ նշված երկու ծառայություններն էլ զբոսաշրջային փաթեթի այն պարտադիր տարրերն են, առանց որոնց դրա գոյությունն անհնար է[2]: Հեղինակների մյուս խումբն էլ գտնում է, որ զբոսաշրջային փաթեթի նման սահմանափակ մեկնաբանությունը հակասում է զբոսաշրջային ծառայությունների մատուցման հարաբերությունների էությանը[3], քանի որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները ճանապարհորդություններ են կազմակերպում տարբեր նպատակներով: Հետևաբար, տարատեսակ նպատակներ հետապնդող ճանապարհորդությունների համար չի կարող նախատեսվել զբոսաշրջային ծառայությունների միևնույն պարտադիր կազմը: Որպես խնդրի լուծում՝ Ի. Օտչեսկին առաջարկում է նախատեսել զբոսաշրջային փաթեթ կազմող ծառայությունների բաց շրջանակ՝ առավել տիպական զբոսաշրջային ծառայությունների թվարկմամբ, որոնց կազմում, սակայն, պարտադիր պետք է լինի փոխադրման կամ տեղաբաշխման ծառայությունը[4]:

Ինչպես բխում է վերոշարադրյալ երկու տեսակետների վերլուծությունից, դրանք պարտադիր են համարում զբոսաշրջային փաթեթում մի դեպքում՝ հյուրանոցային և տրանսպորտային ծառայությունների, մյուս դեպքում՝ դրանցից առնվազն մեկի առկայությունը: Միևնույն ժամանակ, մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել նաև տեսակետ առ այն, որ զբոսաշրջային փաթեթի կազմում թե՛ տրանսպորտային, թե՛ հյուրանոցային ծառայությունների առկայությունն ամենևին պարտադիր չէ[5]:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով զբոսաշրջային փաթեթի՝ հայրենական օրենսդրական բնորոշմանը՝ կարծում ենք՝ դրա կազմում միաժամանակ և՛ հյուրանոցային, և՛ տրանսպորտային ծառայությունների ընդգրկման պահանջն արդարացված չէ, քանի որ այն սահմանափակում է զբոսաշրջիկի նախընտրությամբ կազմված զբոսաշրջային ծառայությունների համալիրը ևս զբոսաշրջային փաթեթ որակելու հնարավորությունը: Մինչդեռ զբոսաշրջային գործունեության պրակտիկայում քիչ չեն այն դեպքերը, երբ զբոսաշրջային ծառայությունները համակցվում են սպառողի ցանկությամբ, ընդ որում՝ ամենատարբեր կազմերով, որոնք, ըստ մեզ, նույնպես կարող են որակվել զբոսաշրջային փաթեթներ: Հատկանշական է, որ Եվրոպական արդարադատության դատարանը նույնպես ընդգծել է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից նախապես ձևավորված և զբոսաշրջիկի պատվերի

---

[1] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌԴ օրենսդրությամբ զբոսաշրջային ծառայությունների համալիրն անվանվում է զբոսաշրջային արդյունք, ռուսական իրավաբանական գրականության մեջ օգտագործվում է հենց այդ եզրույթը: Քանի որ զբոսաշրջային արդյունքի ռուսական օրենսդրական բնորոշումը գրեթե նույնական է զբոսաշրջային փաթեթի հայրենական օրենսդրական բնորոշմանը, ինչպես նաև մեր կողմից հիմնավորվում է զբոսաշրջային փաթեթ եզրույթի կիրառման նպատակահարմարությունը, ուստի սույն հոդվածի շրջանակներում հետայսու նպատակահարմար ենք գտնում վերջինիս օգտագործումը:

[2] Տե՛ս **Алферов В., Федюнин А., Бочкарев М**., Актуальные вопросы правовой регламентации конституционного права граждан на отдых с выездом за пределы постоянного места жительства//Информационная безопасность регионов, 2015, N 1(18), էջ 47:

[3] Տե՛ս **Вольвач Я.,** Туристские услуги как объект гражданских правоотношений, М., Норма-Инфра, 2012 г.,էջ 32:

[4] Տե՛ս **Отческий Е**., Защита прав потребителей в обязательствах по возмездному оказанию туриситских услуг, М., Юстицинформ, 2017г, 37-40:

[5] Տե՛ս **Биржаков М.,** նշված աշխատ., էջ 155, **Стригунова Д**., Соотношение понятий услуга и обслуживание в сфере туризма https://www.lawmix.ru/comm/1176?page=2

հիման վրա՝ վերջինիս պահանջների հաշվառմամբ, համակցված զբոսաշրջային փաթեթների միջև իրավական առումով տարբերություն դնելու անթույլատրելիությունը[1]:

Ավելին, ՀՀ դատական պրակտիկայից ևս հայտնի են դեպքեր, երբ դատարանները զբոսաշրջային փաթեթ են որակել զբոսաշրջային ծառայությունների տարբեր, այդ թվում՝ միաժամանակ տրանսպորտային և հյուրանոցային ծառայություններ չընդգրկող համալիրներ[2]: Ուստի դատական պրակտիկան ևս վկայում է նախատեսված օրենսդրական կարգավորումների և զբոսաշրջային գործունեության պրակտիկայի անհամապատասխանության մասին:

Հարկ է նշել, որ օրենսդիրը զբոսաշրջային փաթեթում ընդգրկվող զբոսաշրջային ծառայությունների շրջանակն ամրագրելուց բացի սահմանել է նաև որոշակի պահանջներ, որոնք բավարարելու դեպքում միայն զբոսաշրջային ծառայությունները կարող են կազմել փաթեթ: Այսպես, զբոսաշրջային փաթեթով մատուցվող ծառայության տևողությունը պետք է գերազանցի 24 ժամը կամ ներառի առնվազն մեկ գիշերակաց:

Օրենքի դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ զբոսաշրջային փաթեթ կազմող ծառայությունների նվազագույն տևողության կամ գիշերակաց ընդգրկելու պահանջը տրամաբանական կապի մեջ է զբոսաշրջիկի օրենսդրական բնորոշման հետ, այն է՝ այցելու, որը ճանապարհորդություն իրականացնելիս ժամանման վայրում (երկրում) անցկացնում է առնվազն մեկ գիշերակաց: Մինչդեռ, ի տարբերություն զբոսաշրջիկի, Օրենքով նախատեսված մեկ այլ սուբյեկտի՝ այցելուի համար իր մշտական բնակության վայրից (երկրից) այլ վայր (երկիր) ճանապարհորդելու նվազագույն տևողություն Օրենքը չի նախատեսում:

Հարկ է նշել, որ զբոսաշրջիկի բնորոշման հարցում հիմնարար նշանակություն ունեցող միջազգային փաստաթղթերի, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Միջազգային զբոսաշրջության և ճանապարհորդությունների մասին» Հռոմի 1963 թ. կոնֆերանսի շրջանակներում ընդունված բանաձևի և «Զբոսաշրջության մասին» Հաագայի[3] հռչակագրի պահանջներից[4] բխում է, որ այն դեպքում, երբ պետությունները ճանապարհորդող անձին զբոսաշրջիկ որակելու համար սահմանում են վերջինիս՝ իր մշտական բնակության վայրից (երկրից) դուրս այլ վայրում (երկրում) գտնվելու ժամկետի նվազագույն շեմ, պետք է համապատասխան իրավական կարգավորումներ նախատեսեն նաև այդ շեմից ցածր տևողություն ունեցող ճանապարհորդություն իրականացնող անձանց իրավական պաշտպանության համար:

Օրենքը որևէ առանձնահատուկ կարգավորում չի նախատեսել զբոսաշրջիկ չհանդիսացող այն այցելուների վերաբերյալ, որոնց ճանապարհորդությունը չի գերազանցում 24 ժամը կամ չի ընդգրկում գիշերակաց: Ուստի այս խումբ այցելուների

---

[1] Տե՛ս Judgment of the European Court of Justice of 30 April 2002, case of **Club Tour, Viagens e Turismo SA vs Alberto Carlos Lobo Gonçalves Garrido and Club Med Viagens Lda:**

[2] Օրինակ՝ **ԵՇՀ/0660/02/15** քաղաքացիական գործով զբոսաշրջային փաթեթ է որակվել ավիափոխադրման և զբոսաշրջիկների ապահովագրության ծառայությունների համալիրը, **ԵԱՔՀ/2041/02/17** քաղաքացիական գործով՝ մուտքի թույլտվության համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման, առողջության ապահովագրության, հյուրանոցի ամրագրման ծառայությունների համալիրը և այլն:

[3] The Hague declaration on tourism of 14 April 1989:

[4] ՄԱԿ-ի «Միջազգային զբոսաշրջության և ճանապարհորդությունների մասին» Հռոմի 1963 թ. կոնֆերանսի շրջանակներում սահմանված «այցելու» կատեգորիան, իր հերթին, ներառում է ճանապարհորդող անձանց երկու խումբ՝ **զբոսաշրջիկներ**՝ ժամանակավոր այցելուներ, ովքեր ժամանման վայրում (երկրում) գտնվում են առնվազն 24 ժամ՝ զվարճանքի, գործնական, ընտանեկան հանգամանքերով պայմանավորված նպատակներով, և **էքսկուրսանտներ**՝ ժամանակավոր այցելուներ, ովքեր ժամանման վայրում (երկրում) գտնվում են 24 ժամից պակաս: «Զբոսաշրջության մասին» Հաագայի հռչակագիրն արդեն, սահմանելով զբոսաշրջիկի նոր բնորոշումը, սահմանափակվել է ճանապարհորդող անձի՝ իր մշտական բնակության վայրից (երկրից) դուրս գտնվելու ժամանակահատվածի միայն առավելագույն տևողության սահմանմամբ՝ չնախատեսելով այդ ժամկետի նվազագույն շեմ:

կողմից զբոսաշրջային ծառայությունների համալիրներ պատվիրելու դեպքում նրանց իրավունքների պաշտպանությունը, կարծում ենք պետք է իրականացվի Օրենքի ընդհանուր կարգավորումների շրջանակներում:

Սակայն զբոսաշրջային փաթեթ և զբոսաշրջային միջոցառում կազմող զբոսաշրջային ծառայությունների համար 24 ժամը գերազանցելու կամ առնվազն մեկ գիշերակաց ընդգրկելու պահանջի պայմաններում, փաստորեն, Օրենքի կարգավորման դաշտից դուրս են մնում այն իրավահարաբերությունները, որոնք սպառողի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև առաջանում են օրինակ՝ դեպի Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող զբոսաշրջային օբյեկտներ էքսկուրսիաներ կազմակերպելու դեպքում, երբ սպառողին առաջարկվող զբոսաշրջային ծառայությունների համալիրն ընդգրկում է դիցուք՝ միայն փոխադրման և էքսկուրսային ծառայությունները:

Ավելին, մեր կարծիքով, նման իրավիճակը խնդրահարույց է ոչ միայն ներքին, այլև արտագնա զբոսաշրջության պարագայում: Մասնավորապես՝ զբոսաշրջային փաթեթում ընդգրկվող ծառայությունների՝ 24 ժամը գերազանցելու կամ առնվազն մեկ գիշերակաց ընդգրկելու պահանջը ենթադրում է զբոսաշրջային փաթեթում առնվազն մեկ օր տնողությամբ կեցության ծառայության առկայությունը: Այդ մասին է վկայում նաև Օրենքը, որի 8-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ գիշերակացի ծառայությունը հյուրանոցային ծառայության տեսակ է: Մինչդեռ ինչպես արդեն նշվել է, զբոսաշրջային փաթեթի կազմում որևէ, այդ թվում՝ հյուրանոցային ծառայության առկայությունը, ըստ մեզ, պարտադիր չէ: Ուստի այն դեպքում, երբ, օրինակ՝ զբոսաշրջիկը պատվիրել է միայն ուղևորափոխադրման և էքսկուրսային ծառայություններ, եթե անգամ նշված դեպքում ժամանման երկրում անձը որևէ վայրում, օրինակ՝ իր կողմից ամրագրված հյուրանոցում կամ ազգականի տանը անցկացնում է գիշերակաց, փաստորեն զբոսաշրջիկին մատուցվող՝ փոխադրման և էքսկուրսային ծառայությունների համալիրը չի համարվի զբոսաշրջային փաթեթ, քանի որ դրա համար անհրաժեշտ՝ առնվազն մեկ գիշերակաց ընդգրկելու կամ 24 ժամը գերազանցելու պահանջը բերված օրինակում զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների նկատմամբ օբյեկտիվորեն կիրառելի չէ:

Այսպիսով, գործնականում լայն տարածում ստացած՝ զբոսաշրջիկի պատվերի հիման վրա և ճանապարհորդության նպատակի հաշվառմամբ ձևավորված տարբեր զբոսաշրջային ծառայությունների համալիրները՝ առանց դրանցում ընդգրկվող ծառայությունների կոնկրետ շրջանակի ամրագրման և վերջիններիս տնողության սահմանափակման[1], ևս օրենսդրական կարգավորման տիրույթում ընդգրկելու անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք որպես ճանապարհորդության կազմա-

[1]Թեև առաջին հայացքից կարող է թվալ, որ զբոսաշրջային ծառայությունների այդպիսի համալիրներն արդեն իսկ գտնվում են օրենսդրական կարգավորման դաշտում, քանի որ Օրենքը սահմանում է նաև զբոսաշրջային միջոցառման, այն է՝ մեկ ծրագրում համակցված առնվազն երկու զբոսաշրջային ծառայությունից բաղկացած, միասնական սակագնով տրամադրվող, առնվազն 24 ժամից ոչ պակաս ժամանակահատվածում մատուցվող կամ առնվազն մեկ գիշերակաց ընդգրկող զբոսաշրջային արդյունքի հասկացությունը: Սակայն քաղաքացիական իրավունքների այս օբյեկտի իրավական բնորոշման մեջ «մեկ ծրագրում համակցված լինելու» պահանջի անորոշությունը, որը թույլ չի տալիս հասկանալ՝ արդյոք այն վերաբերում է նաև զբոսաշրջիկի նախընտրությամբ և վերջինիս պատվերի հիման վրա զբոսաշրջային ծառայությունների համակցման դեպքերին, թե՝ ոչ (զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեության պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ խոսքը զբոսաշրջային գործունեության սուբյեկտների նախընտրությամբ նախապես ձևավորված զբոսաշրջային ծառայությունների համալիրների մասին է), ինչպես նաև ծառայությունների նվազագույն տնողության կամ առնվազն մեկ գիշերակաց ընդգրկելու օրենսդրական պահանջը վկայում են զբոսաշրջային միջոցառումը որպես զբոսաշրջության կազմակերպման պայմանագրային հարաբերության օբյեկտ դիտարկելու աննպատակահարմարության մասին:

կերպման կապակցությամբ առաջացող պայմանագրային իրավահարաբերություններ-ի օբյեկտ դիտարկել զբոսաշրջային փաթեթը՝ այն բնորոշելով որպես *մեկ ճանա-պարհորդության նպատակով զբոսաշրջային օպերատորի կողմից նախապես կամ զբոսաշրջիկի պատվերի հիման վրա ձևավորված միասնական գնով իրացվող առն-վազն երկու զբոսաշրջային ծառայությունների համալիր:*

НЕКОТРЫЕ ВОПРОСЫ СООТНОШЕНИЯ ТУРИСТИЧЕСКОГО ПРОДУКТА И ТУРИСТИЧЕСКОГО ПАКЕТА

Ева Сагоян
Аспирант кафедры гражданского права ЕГУ,
Начальник отдела по экспертизе и регистрации ведомственных правовых актов Министерства юстиции РА

В статье рассматриваются сущность и некоторые вопросы соотношения туристического продукта и туристического пакета. В итоге автор приходит к выводу, что как объект договорных правоотношений субъекта туристической деятельности и потребителя в законе ‘’О туризме и туристической деятельности’’ РА целесообразно закрепить понятие туристического пакета. Кроме того, для обеспечения правового регулирования тех комплексов туристических услуг, которые формируются по заказу потребителя и с учетом цели путешествия, автор предлагает не ограничивать понятие туристического пакета перечнем конкретных туристических услуг и их минимальной продолжительностью.

SOME ISSUSES OF CORRELATION OF TOURISM PRODUCT AND THE PACKAGE TOUR

Eva Saghoyan
PhD Student at YSU Chair of Civil Law,
Head of division at the Agency for Expert examination of Legal acts of the RA Ministry of Justice

The article discusses some issues of the essence and correlation of tourism product and the package tour. As a result the author comes to the conclusion that as an object of contractual relationship between tour operator/agent and consumer should be identified package tour. Moreover, in order to ensure the legal regulation of packages, formed in accordance with the order of the consumer and the aim of trip, the author suggests not to limit the consistency of packages and the duration of tourist services.

Բանալի բառեր - *զբոսաշրջային արդյունք, զբոսաշրջային փաթեթ, պայմանագիր, զբոսաշրջային ծառայություն, իրավահարաբերության օբյեկտ*
Ключевые слова - *туристический продукт, туристический пакет, договор, туристические услуги*
Key words - *tourism product, package tour, contract, tourism services*